Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքների պետական գնման պայմանագիր N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/09»

ք. Երևան «02» փետրվարի 2015թ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հասրաթյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը, ի դեմս Կազմակերպության գործադիր տնօրեն Վ.Կարագյոզյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների·

1.2 Աշխատանքը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը

2.1.2 Եթե կատարվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը. Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը.

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին.

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

2.4 Կատարողը պարտավոր է՝

2 4 1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4 2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2 4 3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին.

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ

Կատարողը Աշխատանքի կատարման ավարտից 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 3).

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10-օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի կատարման ենթակա Աշխատանքի ընդհանուր գինը կազմում է 28258700 (քսանութ միլիոն երկու հիսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 2 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը·

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար.

5 2 Սույն պայմանագրի N1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով·

5 3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով·

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

5 4 Սույն պայմանագրի 5 2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ·

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել· Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը· Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին.

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7 1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը·

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի· Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը·

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման·

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը·

Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով·

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7 4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7 5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով· Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ· Սույն պայմանագրի N 1, N 2 և N 3 հավելվածները /5 էջ/ հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7 7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության. Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության.

7 8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը.

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կառ առընթեր ԱԳԿՊ կոմիտե	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Կոմիտաս 35/2
հ/հ 90001322004 2	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/6
ՀՀ ՖՆ գանձապետական վարչություն	Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00113126
Աշխատանքների	Գործադիր տնօրեն՝
ղեկավար՝ Լ. Հասրաթյան	Վ. Կարագյոզյան
/ստորագրություն/	(ստորագրություն)
Կ Տ.	Կ Տ

Հավելված 1
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/09»

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման

1. Իրավիճակի նկարագրությունը և հիմնական խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 24-ի N 1028 որոշման համաձայն գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական մարմին է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն: Այդ ժամանակահատվածից սկսած բնագավառը վերածնունդ ապրեց՝ մշակվեցին բնագավառում իրականացվող գործընթացները կարգավորող նորմատիվ իրավական և տեխնիկական փաստաթղթեր, ծրագրեր, ձեռք բերվեցին ժամանակակից սարքավորումներ և դրանցով չափագրված նյութերի մշակման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթներ:

Ելնելով ժամանակակից տեխնոլոգիաներով ստեղծվող գեոդեզիական և տեղագրական աշխատանքների միասնական նորմաների ներդրման նպատակահարմարությունից, Հայաստանի Հանրապետության գեոդեզիայի և քարտեզագրության բնագավառը միջազգային գեոդեզիական և քարտեզագրական ստանդարտներին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ է ունենալ գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաներ.

2. Աշխատանքների իրականացման նպատակը

Աշխատանքների նպատակը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների որոշ արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծումն ու ներդրումն է:

Գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման նպատակն ու խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) մեկ միասնական նորմաների ստեղծում.
- Տեղագրագեոդեզիական տարաբնույթ աշխատանքների իրականացման խնդիրների լուծում·

Հանրապետության տարածքում գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծումը կապահովի ունենալ հետևյալ արդյունքները՝

ՀՀ տարածքում իրականացվող գեոդեզիական և տեղագրական նախատեսված աշխատանքների նախահաշվային արժեքների ճշգրիտ հաշվարկում

Տեղագրագեոդեզիական տարաբնույթ աշխատանքների իրականացման համար աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմավորման հնարավորություն

Տեղագրագեոդեզիական տարաբնույթ աշխատանքների իրականացման համար հնարավորություն ունենալ ներկայացնելու իրական գնառաջարկ.

3. Աշխատանքների իրականացման միջոցառումները

Աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները՝

- Ուսումնասիրել միջազգային փորձը, ժամանակակից տեխնիկական միջոցների և առաջավոր տեխնոլոգիաների կիրառմամբ կատարվող առավել զանգվածային տեղագրա-գեոդեզիական աշխատանքների նորմաները.

Գեոդեզիական և տեղագրական դաշտային և կամերալ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաները անհրաժեշտ է ստեղծել ոլորտում իրականացվող որոշ աշխատանքների համար·

Արտադրողականության և ժամանակի միասնական նորմաների մշակման համար պետք է հիմք ընդունել հետևյալ տվյալները՝

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

- ժամանակաչափական դիտարկման նյութերը,
- Աշխատանքի կազմակերպման և կատարելագործման վերլուծության արդյունքները,
- Դաշտային տեղագրա-գեոդեզիական աշխատանքների կատարման գործող տեխնիկական հրահանգները, մեթոդական ձեռնարկները,
- Սարքերի ու սարքավորումների, մեխանիզմների անձնագրերը,
- Տեխնիկական բնութագրերը և այլ տեխնիկական գրականություն

4. Աշխատանքների իրականացումից ակնկալվող արդյունքները

Այս աշխատանքների իրականացման արդյունքում 2015 թվականին նախատեսվում է ունենալ՝

Հայաստանի Հանրապետության տարածքում գեոդեզիական և տեղագրական դաշտային ու կամերալ որոշ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) մեկ միասնական նորմաներ – էլեկտրոնային տարբերակով.

5. Աշխատանքների իրականացման ֆինանսական ապահովումը և գնման ժամանակացույցը

Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիայի և տեղագրական որոշ աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման ժամանակացույցն ըստ ծավալների, իրականացման ծախսերի և ժամկետների տրված են գնման ժամանակացույցում

Աշխատանքի կատարման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	25.12 2015 թ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Գնման ժամանակացույց

Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության(ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքների

N	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազ. դրամ)	1-ին եռամսյակ		2-րդ եռամսյակ		3-րդ եռամսյակ		4-րդ եռամսյակ	
						ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը	ծավալը	գումարը
1	Միջազգային փորձի ուսումնասիրում և տեխնիկական նախագծի կազմում	նախագիծ	1	1443000	1443 0	1	1443 0						
2	Գեոդեզիական պլանային ցանցի կետերի հետախուզում, տեղադրում, դիտարկում, և վերականգնում	բրիգադ /մարդ/*ամիս	3*6	327680	5898 2			3*3	2949 1	3*3	2949 1		
3	Նիվելիրային I, II, III և IV դասերի ցանցերի հետազոտում, հենանիշերի տեղադրում, դիտարկում և վերականգնում	բրիգադ /մարդ/*ամիս	3*6	327680	598 2			3*2	1966 1	3*3	2949 1	3*1	983 0
4	GPS ընդունիչ կայաններով կետերի դիտարկում	բրիգադ /մարդ/*ամիս	2*3	327680	1966 1			2*2	1310 7	2*1	655 4		
5	Ժամանակակից գործիքներով տեղագրական հատակագծերի (1 500 - 1 5000 մ-ը) հանութագրում և թարմացում	բրիգադ /մարդ/*ամիս	3*6	327680	5898 2			3*2	1966 1	3*3	2949 1	3*1	983 0
6	Ժամանակակից գործիքներով տեղագրական հատակագծերի թվայնացում և թարմացում	բրիգադ /մարդ/*ամիս	2*4	327680	2621 4			2*2	1310 7	2*2	1310 7		
7	1 10000-1 1000000 մասշտաբների տեղագրական քարտեզների ստեղծում և թարմացում	բրիգադ /մարդ/*ամիս	2*6	327680	3932 2			2*2	1310 7	2*3	1966 1	2*1	655 4
8	Տեխնիկական հաշվետվության կազմում	հաշվետվություն	1	601400	601 4							1	601 4
	Ընդամենը՝				***28258.7***		***1443.0***		***10813.4***		***12779.5***		***3222.8***

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ կառ առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն՝ ք Երևան, Վազգեն Սարգսյան 7
հ/հ 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի
ղեկավար՝ _____ Վ. Հասրաթյան
/ստորագրություն/ Կ Տ.

Կ ա տ ա ր ո ղ

«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝
_____ Վ. Կարագյոզյան
(ստորագրություն) Կ Տ.

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված թիվ 2
թիվ «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՀԱՇՁԲ-15/09»
գնման պայմանագրի

Վ Ճ Ա Ր Մ Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Ւ Յ Ց*

Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքների

N	Աշխատանքների անվանումը	Ֆինանսավորման գումարը 2015թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների, ընդ որում՝											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Հայաստանի Հանրապետությունում գեոդեզիական և տեղագրական աշխատանքների արտադրողականության (ժամանակի) միասնական նորմաների ստեղծման աշխատանքներ	1443.0	1443.0	12256.4	12256.4	12256.4	25035.9	25035.9	25035.9	28258.7	28258.7	28258.7	28258.7

**գումարները ներկայացված են աճողական կարգով*

Պատվիրատու
ՀՀ կառ. առընթեր ԱԳԿՊ կոմիտե
Հասցեն ք.Երևան, Արշակունյաց 7
h/h 900013220042
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328
Աշխատակազմի
ղեկավար՝ ____________ Վ.Հանրաթյան
/ստորագրություն/
Կ.Տ.

Կատարող
«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ
ք. Երևան, Կոմիտաս 35/2
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ Արաբկիր մ/ճ
Հ/Հ 247120034787
ՀՎՀՀ 00113126
Գործադիր տնօրեն՝
____________ Վ. Կարագյոզյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

Հավելված 3
N «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ ԲԸՀՀԱՇՁԲ 15/09»
ծածկագրով գնման պայմանագրի

Կատարող Պատվիրատու

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<< >> 2015թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝ *«ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸՀՀԱՇՁԲ-15/09»*
Պատվիրատուն՝ ի դեմս պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ և Կատարողը՝ ի դեմս ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն , հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին

Պայմանագրի շրջանակներում Կատարողը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

Գնման առարկայի անվանումը	**Գնման առարկայի քանակական ցուցանիշը**	**Աշխատանքների կատարման ժամկետը**	**Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)**	**Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)**
Ամբողջը՝				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

ստորագրություն

Կ Տ

Աշխատանքը ընդունեց

ստորագրություն

ստորագրություն

Կ Տ

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com